

Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՄԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

(11 սեպտեմբերի 2005 թ.)

*«Եթէ ոչ հապրն ցորենոյ անկեալ յերկիր մնաու-
նիցի, ինքն միայն կա. ապա եթէ մնաւնիցի, բա-
զում արդիւնս առնէ:*

...Ուր Եսն եմ, անդ եւ պաշտօնեայն Իմ եղիցի»:

(Նովհ. ԺԲ 24, 26)

Սիրելի հավաքացալներ,

Այսօր ուրախ օր մըն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ համար, ուրախ օր մըն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և անոր քաջարի միաբանության համար, ուրախ օր մըն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին համար, ուրախալի օր մըն է բնականորեն այն քահանայից համար, որոնք ձեր վկայությամբ, ձեր ներկայությամբ, ձեր աղոթքներով և Սուրբ Հոգւով ձեռնադրուեցան և կոչվեցան քահանայության, իրենց ազգա-կաններ ու բարեկամներ և մենք բոլորս այսօր ուրախ ենք:

Մի տեսակ փոնական, հարսանեկան օր մըն է, հոգևոր խնջույք, հոգևոր հարսանիք մըն է, ուր փեսաները Եկեղեցւոյ, որպէս Քրիստոսի ծառայք կմարչին, կմոլորենան իրենց սիրելիին, կնվիրվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ծառայության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ միջոցով՝ Ընդհանրական Եկեղեցիին: Այս ամիթով, որպէս իմ մտածումներու ամփոփում, ես ամի մի հաւրված մեր Տիրոջ Ավետարանի խոսքեն, որը երեկ երեկոյան արարողության ընթացքին կարդացինք: Այնպէս կըսվի. եթէ ցորենի հափիկը գետին չի ընկնի, չմննի՝ գոհողոյթուն չընէ, որևէ արդյունք չի փա: Բայց եթէ հողին մեջ ինկալ ցորենը, երբ որ ցորենը ցանվն և իր կյանքը փա, այսպէս իր կյանքը փալով նոր կյանք կ'աւանդուի և հսկա արդր հունձքով կ'ելցնի: Նաև այդ խոսքի շարունակության մեջ մեր Տերը կըսէ. «Ուր Եսն եմ, անդ եւ պաշտօնեայն Իմ եղիցի»:

Ներկաբար, սիրելիներ, կուգին նախ անդրադառնալ Տիրոջ խոսքին առաջին մասին, որը և մեզի կբացարբն և կընդգծն կարևորութիւնը գոհողոյթան՝ ֆիզիկական, բարոյա-կան, ամեն փեսակի գոհողոյթան: Տիրոջ ու Ավետարանի ծառա եղողը կամ ամհասարակ կյանքի մեջ, ընտանիքի մեջ, ազգի մեջ, եկեղեցւոյ մեջ, մշակույթի մեջ, գիտության մեջ, եթէ որևէ մեկը գոհողոյթուն չընէ, որևէ արդյունք չի փա: Գիտնականն ալ, արվեստագետն ալ պետք է որ գոհողոյթուն ընէ. երբեմն իր գիշերները գոհն, երբեմն իր կյանքը գոհն, որպէս-գի լավ արդյունք փա: Նմանապէս մեր Տերը մեզմն անձնական գոհողոյթուններու արդ-յունք կպահանջն, որպէսզի մեր կյանքը արդյունավոր դառնա, որպէսզի մեր կյանքը հա-

մաճայն Ավետարանի իր պարուղը և հունձը ընե: Այդ ձևով ուրեմն գոհողության պահանջքը երեկ երեկոյան ձեռնադրության կարգի առաջին մասի մեջ շեշտվեցավ և բացատրվեցավ:

Երկրորդ՝ այն է, որ մեր Տերը կըսեր. ուր որ Ես եմ, այնպեղ նաև Իմ պաշտոնյայք պիտի ըլլան, և մեր Տեր Հիսուս Զրիստոս աներևութապես կրնա ըլլալ մարդկանց մոտ զացած, այցելած ըլլա, բազմած ըլլա անոնց տանը, կրնա ըլլալ մեր Տերը աներևութապես հիվանդի մը այցելած ըլլա, կրնա ըլլա մեր Տերը աներևութապես բանարկյալի այցելություն Կված մը այցելած ըլլա, կրնա ըլլա մեր Տերը աներևութապես բանարկյալի այցելություն Կված մը այցելած ըլլա, և մենք զգալով այդ հոգը, ուրեմն որպես պաշտոնյաներ Ավետարանի և Սուրբ Եկեղեցւոյ, պիտի հետևինք Տիրոջ քայլերուն: Ուր որ Հիսուս է, այնպեղ նաև մենք պարտաւորապէս պիտի ըլլանք ծառայելու, գործելու: Ուր որ մեր Տերը Հիսուս է, այնպեղ որպէս հոգևորական պիտի հասնինք և օգնենք, օգտակար ըլլանք, ծառայենք: Միայն ծիսակատարությունը չէ, սիրելիներս, քահանայությունը և խոսքիս այս մասը բնականորեն ձեզ՝ նորած մեր քահանա հայրերուն կողովմ: Ծառ կարևոր է պաշտամունքը, շատ կարևոր են Սուրբ Խորհուրդները, բայց միայն այդ չէ քահանայի պաշտոնը: Նույնքան Սուրբ է Ավետարանի խոսքը:

Մենք և՛ խորհրդակատարությանց ծառաներն ենք, և՛ Սուրբ խոսքի ծառաներն ենք: Սուրբ խոսքը սուրբ և ճշմարիտ ձևով ժողովրդին պիտի բացատրենք, ժողովրդի սրտին մեջ պիտի դրոշմենք Ավետարանի խոսքը: Պիտի դրոշմենք այն ձևով, որ մեր հայրերը հասկըցած են, պիտի փոխանցենք մեր ընտանիքներուն, քրիստոնյա ընտանիքներուն, և որովհետեւ փորձությունները շատ են, աղանդները շատցած են նաև այսօրեղ՝ մեր Հայաստան աշխարհին մեջ, ուր որ Լուսավորիչը իր քարոզությունները ըրավ, ուր որ քրիստոնեությունը պետական կրոն դարձավ, անգամ այսօրեղ ուրեմն եկած են նորաբոյս շատ աղանդներ: Երբ որ Պատարագ կընենք, չըլլա որ առանց քարոզի Պատարագ ընենք ձեր կյանքի մեջ, երբ որ Պատարագ կընենք և եպիսկոպոս չկա, անպայման պիտի քարոզենք, երբ որ մկրտություն կընենք, պսակ կընենք, թաղում կընենք, անպայման այդ խորհուրդը ժողովրդին պիտի բացատրենք, որպեսզի ժողովուրդը հասկնա, որպեսզի իմանա ինչ որ ըրեցիք:

Ահապասիկ, սիրելիներ, ասիկա մեր քահանայից կարևոր պարտականություններն և պաշտոններն են ևն է, որոնք ես շատ պիտի փափագեի, որ նոր այս ձեռնադրյալները նկատի առնեն և այդ ձևով հասնեն ամեն տեղ, ուր որ մեր Տերն է, և այդպիսով աղքատի, հարուստի, բանարկյալի օգնության հասնինք:

Սիրելիներ, դուք միշտ հավատարիմ պիտի մնաք ոչ միայն մեր Եկեղեցւոյ բարձրագոյն եղինակության, ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այլև մեր քահանա հայրերը, վարդապետ, եպիսկոպոս, մենք բոլորս հավատարիմ պետք է մնանք մեր Եկեղեցւոյ մեծ վարդապետներուն, մեր անգերազանցելի մեծ հայրապետներուն և հայրերուն:

Ահապասիկ, սիրելիներ, այս մի քանի համեստ մտածումներս ձեռնադրության այս ամիս թով ցանկացա փոխանցել ձեզի: Ուրախությունը կապուե մեր հոգին և սիրտը: Ես կիիշեմ Կասը, քսան, երեսուն տարիներ առաջ, երբ որ ձեռնադրություն կըլլար, ձեռնադրող եպիսկոպոսը կկրկներ Տիրոջ խոսքը. «Զի հունձք բազում են եւ մշակք սակաւ» (Մատթ. Թ 37): Հունձը շատ է, գործը շատ է և մշակները քիչ են: Փառք Աստուծոյ, այդ ժամանակները անցած են, և մենք կերպով մը ծառայողներ մըն ենք, և դուք պարտաւորապէս պիտի ըլլաք նոր ձևով, նոր ոճով, նոր ուղղութեամբ, նոր ոգիով ուրեմն ծառայել մարդոց, ծառայել հայ ժողովրդին,

ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Մենք մեր աղոթքներու մեջ երեկ և այսօր ըսինք, որ չէ, փկար չենք, կկոչվինք սարկավագութենն քահանայության, և Սուրբ Հոգին է, որ գիրենք կանչեց, իրենք կոչում ունեցան: Այդ մեր Լուսավորչի, մեր Սուրբ Մեսրոպի, մեր Սուրբ Սահակի և անոնց հոգևոր զավակաց կոչում է: Ինչ կնշանակի կոչում, մեզանից կախում չունի: Սուրբ Հոգին է, որ կկանչե, մեր մեջ կդնե այդ հոգին:

Դուք, սիրելիներ, կոչված եք քահանայության, ինչպես առաքյալները կոչվեցան առաքելության: Սուրբ Հոգին լեցված էր իրենց մեջ, և իրենք սկսան փարբեր-փարբեր լեզուներով քարոզել մեր Տիրոջ Ավետարանի խոսքը: Ընդհանրապես մենք 1600-ամյակը կտոնենք մեր Այր Բեն Գիմի և անոր սրբեղծման: Ո՛վ էր, որ կանչեց Սուրբն Մեսրոպ, որ Այբուբենը սրբեղծե, երբ ան բարձրաստիճան զինվորական մըն էր, նա Արշակունյաց զավառի մեջ դիվանապետ էր, շքանշաններ ուներ, սիրված հրամանատար մըն էր:

Սիրելի քահանա հայրեր, փառք Աստծու, ուրախությունը, բախտը և առիթը ունեցա փոխանցելու ձեզի Սուրբ Հոգու խոսքերը, այդ կամքը, որ Գրիգոր Լուսավորիչն էր կուգա:

1953 թ. հուլիս սկիզբը ինքս ձեռնադրվեցա քահանայ և այսօր 52 փարիներ վերջը, որ կշարունակեմ քահանաներ ձեռնադրել, արիկա ինձի բախտավորություն մըն է: Ուրախ եմ և երջանիկ:

Կուգեի ձեզի հեփկյալ կարճ բացատրությունը ընել շնորհավորանքներու ու բարեմաղթանքներու կողքին:

Վազգեն սարկավագը կոչեցա Տեր Խաչատուր, քանի որ այսօր Խաչի օրն է, Խաչվերացի օրն է, անոր համար չէի կրնա անտեսել այս փոքր, Խաչը, Խաչիկը, Խաչատուրը և այդ պարճառով Վազգեն սարկավագին անվանեցա Տեր Խաչատուր քահանա:

Մանուկ սարկավագը կոչեցինք Մեքենու, սա մի ինչ-որ անսովոր անուն է վերջին փասնամյակներուն: Մենք ունեցել ենք 7-րդ դարում Մեքենու եպիսկոպոս, որ ժամանակի պարմությունը գրած է, և Մանուկ սարկավագին համար ես ընտրեցի Մեքենու անունը թերևս անհամեստ պարճառով մը, որ Մեքենու եպիսկոպոսի մասին և իր պարմության մասին ես գրած եմ մի հայտը, ամբողջական գիրք մը և ուզեցի որ այս անունը այս ձևով կենդանի ըլլա մեր Եկեղեցվո մեջ, ապրի և ապրեցնի:

Դավիթ սարկավագը կոչվեցավ Տեր Դերենիկ, և առաջին առիթով ձեր միտքը կուգա Դերենիկ վարդապետ, որ օրեր առաջ պարահամ ավտոյաքին ողբերգականորեն զոհ գնաց, բայց նաև, ինչպես հիշեցի, 52 փարիներ առաջ Տեր Դերենիկ եպիսկոպոս Փոլաղյան ինձ կուսակրոն քահանա ձեռնադրեց և դժբախտաբար նա էլ դառը ճակատագիր ունեցավ և ցանկացա, որ այս ձևով ևս իր հիշատակը պահվի և նոր սերնդի մեջ մնա:

1600-ամյակի առիթով Անդրանիկ սարկավագը կոչեցի Մաշտոց և Արմեն սարկավագը կոչեցի Մեսրոպ: Մեսրոպ Մաշտոցի փարին է, 1600-ամյակն է, նաև իմ հոգևորական անունն է:

Վարդան սարկավագը կոչեցի Սրբեփաննոս, որովհետև դարձյալ ես մինչ քահանայական ձեռնադրությունը փակավին սարկավագ էի, սակայն ոչ միայն քրիստոնեական Եկեղեցվո առաջին սարկավագին անունն է Սրբեփաննոս, այլ նաև մենք ունեցած ենք Սրբեփաննոսներ, մասնավորաբար 7-րդ դարում Սյունյաց աշխարհի մեջ արքեպիսկոպոս մը ունեցած ենք, շատ փառանդավոր, մեծ զիտնական, մեծ աստվածաբան: Ես ալ համեստա-

բար Մյեփաննոս արքեպիսկոպոս Սյունեցու մասին սարկավագության շրջանին գիրք մը գրած եմ և ապա 1958 թ. հրապարակած, և այդ հիշարարկներն էին, որ ուզեցի արտահայտել: Վարդան սարկավագն այժմ Տեր Մյեփաննոս կոչվեցավ:

Բոլորը բացառեցի, մնում է Գոռ սարկավագ Գրիգորյան, որ այժմ կկոչվի Տեր Գրիգոր: Գրիգոր անունը և՛ իմ ազգանունի մեջ կա, և՛ իմ հորս անունն է, և՛ մեր Գոռ սարկավագի ընտանիքի մեջ կա: Մեր Եկեղեցվո մեջ ալ, ինչպես գիրքը, Գրիգոր Լուսավորչի անունն է, Գրիգոր Նարեկացիի, Գրիգոր Տաթևացիի անունն է, բազմաթիվ պատճառներ կան, որպեսզի մեկը Գրիգոր կոչեն: Բախարավոր անուն մըն է, որովհետև մեր պատմության մեջ մեծագույն մեր դեմքերը կկոչվին Գրիգոր: Գրիգոր Լուսավորիչը մանավանդ, ինչպես և Գրիգոր Նարեկացին ու Գրիգոր Տաթևացին, և այս ձեռնադրությամբ կցանկանայի, որ մեր մեծ Գրիգորներու միաժուժները և զգացումները կերպով մը ձեզի փոխանցվին:

Այժմ կխնդրեմ բոլորս միասին հոպրնկայս աղոթենք առ Աստված և փառք փանք, փառք փանք, որ այսպիսի ուրախ հարսանեկան փոնի մը արժանի եղանք՝ ես և դուք: Փառք Աստծո, ուրախ եմ, որ այսօր կարողացա այս ձեռնադրությունը կատարել, կշնորհավորենք իրար բոլորս, կշնորհավորենք և թող Աստված մեզ բոլորիս առողջ պահե, թող Աստված մեր Հայրենիքը անսասան պահե, թող Աստված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ անսասան պահե, անշարժ պահե և դուք բոլորդ ընտանյոք հանդերձ վայելեք Աստծո օրհնությունը: Ձեր հույսը երբեք ձեր մեջ չպակսի, հույսը և հավատը երբեք չպակսի և դիմանաք ամեն կարգի դժվարությանց:

Փառք Սուրբ Երորդության, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից, ամեն: